Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 3-ի N 889 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՄԱՐԶԻՉ-ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետությունում գործում է 166 մանկապատանեկան մարզադպրոց: Այդ մարզադպրոցներում աշխատում են 2123 մարզիչ-մանկավարժ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և Հայաստանի Հանրապետության մարզերի ենթակայության 607 մարզիչ-մանկավարժ, ինչպես նաև մարզական հասարակական կազմակերպություններում՝ 290 մարզիչ-մանկավարժ, համայնքային ենթակայության մարզադպրոցներում, Երևան քաղաքում և մարզամշակութային կենտրոններում աշխատող 1226 մարզիչ-մանկավարժ: Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (21-րդ հոդված, 13-րդ կետ) մանկապատանեկան սպորտի բնագավառի մարզիչ-մանկավարժների պատրաստման և վերապատրաստման կազմակերպումը վերապահված է նախարարությանը:

2. Առանցքային է մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման խնդիրը, որը 2019 թվականից Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվել՝ կապված սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ փոփոխման, կորոնավիրուսային համաճարակի տարածման (COVID-19), ինչպես նաև պատերազմական իրավիճակի հետ, որի հետևանքով աշխատող մարզչական կադրերը մասամբ հետ են մնացել արագ, թռիչքաձև

զարգացում ապրող սպորտային նվաճումներից: Այդ է վկայում նաև ոչ հենակետային մարզաձևերից տևական ժամանակ միջազգային մրցաշարերում Հայաստանի Հանրապետության մարզիկների բարձր արդյունքներ չունենալու իրողությունը:

3. Ելնելով վերոգրյալից՝ նախարարությունը նախատեսում է իրականացնել մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման ծրագիր:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչ-մանկավարժներին ուսուցման ժամանակակից պահանջների և մեթոդների, սաների ֆիզիկական դաստիարակության արդի հիմնախնդիրների, մարզչական և կազմակերպական նորագույն նվաճումների և արդյունքների մասին իրազեկումն ու ուսուցանումն է:

3. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐԸ

5. Ծրագրի խնդիրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված գումարի սահմաններում իրականացնել դասընթացներ, որոնց միջոցով տարեկան վերապատրաստվելու են Հայաստանի Հանրապետության մարզադպրոցներում դասավանդող (անկախ նրանց գերատեսչական պատկանելիությունից) առնվազն 182 մարզիչ-մանկավարժ: Ծրագիրը լինելու է շարունակական և իրականացվելու է յուրաքանչյուր տարի:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Վերապատրաստումն իրականացվում է 3 օր տևողությամբ (ընդհանուր քանակով՝ 24 ակադեմիական ժամ)՝ անցկացնելով ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ՝ համաձայն միջազգային ֆեդերացիաների կողմից մշակված ծրագրերի և չափորոշիչների:

7. Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման համար գրանցումներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով ոչ ուշ, քան դասընթացների մեկնարկից 30 օր առաջ: Գրանցված մարզիչ-մանկավարժների ցուցակն ամփոփելուց հետո ձևավորվում են խմբեր՝ յուրաքանչյուրը շուրջ 30 մասնակցով: Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման խմբերի ձևավորման ընթացքում առաջնահերթությունը տրվում է ըստ հերթականության՝ հենակետային, հեռանկարային, ծրագրային մարզաձևերին (համաձայն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 24-ի N 146-Ա/1 հրամանի), իսկ վերապատրաստման գործընթացն իրականացվում է մարզական ֆեդերացիաների հետ համատեղ:

8. Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ սպորտային կազմակերպությունում, որը հագեցած կլինի համապատասխան նյութատեխնիկական բազայով՝ գործնական պարապմունքներ և տեսական դասընթացներ անցկացնելու համար, իսկ դասընթացները վարելու են արտերկրից հրավիրված համապատասխան մարզաձևերի բարձր վարկանիշ ունեցող մասնագետները: Վերապատրաստման դասընթացների գործնական և տեսական պարապմունքների անցկացման ժամանակացույցը, վերապատրաստվողների (անվանացանկ կամ ցուցակ, մարզաձևեր և աշխատավայրի հասցեներ) և արտերկրից հրավիրված մասնագետների այցը, ինչպես նաև վերապատրաստումների հետ կապված այլ աշխատանքները համակարգում է նախարարությունը:

9. Վերապատրաստվող մարզիչ-մանկավարժների և վերապատրաստողների ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին: Մարզիչ-մանկավարժի աշխատավարձը պահպանվում է, իսկ ճանապարհածախսը հոգում է գործուղող կազմակերպությունը:

10. Վերապատրաստման դասընթացներն ավարտած մարզիչ-մանկավարժներին տրվում է նախարարության կողմից հաստատված համապատասխան էլեկտրոնային ավարտական վկայական:

5. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

11. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

03.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ